ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՆԺԴԵՀ ԱՐՏԱՇԵՍԻ

ՄԻՋԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1991-2001 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մինասյան Է.Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պողոսյան Է.Վ.

պատմական գիտությունների թեկնածու Զաքարյան Լ.Ս.

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային արխիվ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հուլիսի 3-ին, ժամը **14^{00}-ին**, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 2-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԴԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի ուսումնասիրման արդիականությունը: Խորհրդային Միության գոյության ողջ շրջանում ՀԽՍՀ-ում քաղաքական գործունեության առանձնաշնորհը պատկանում էր Կոմունիստական կուսակցությանը, որին վերապահված էր պետության հասարակական-քաղաքական կյանքի ուղղորդումը: Անկախության նոր շնչով առաջին հերթին վերաշարադրվեց կուսակցական համակարգը՝ միակուսակցականությունից անշրջելիորեն անցում կատարելով բազմակուսակցական համակարգին: Սա պատմական կարևորագույն պահ էր, որ սկիզբ դրեց ոչ միայն հանրապետության նոր՝ ժողովրդավարական բնույթի ձևակերպմանը, այլև նախանշեց հետագա զարգացման ուղին:

1991-2001 թթ. միջկուսակցական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը հարկ է դիտարկել ժամանակակից պատմագիտության հոլովույթում: Այսժամ պատմությունն ընկալվում է վերջին շրջանի իրադարձությունները համատեքստայնացնելու և հայեցակարգայնացնելու տեսանկյունից: Հետազոտության շնորհիվ հնարավորություն է առաջանում բացահայտելու ՀՀ բազմակուսակցական համակարգի արմատները, պարզելու ձևավորման ու զարգացման առանձնահատկությունները, երևան հանելու թույլ տրված վրիպումները: Հաշվի առնելով ՀՀ-ում ժողովրդավարության զարգացման ու միջկուսակցական հարաբերությունների վերափոխման ներկայիս միտումները՝ սույն հետազոտությունը կարող է օժանդակել բազմակուսակցական արդյունավետ համակարգի գործիքակազմի ու մեխանիզմների հայթայթման ու կիրառման հարցում: Ավելին՝ այսօր աշխարհի առաջատար ժողովրդավարական երկրներում իրենց հաստատուն թեևականացվածության տեսանկյունից թե՛ կուսակցությունները, թե՛ նրանց փոխհարաբերությունները համազոր են պետական կայացած ինստիտուտներին: Մինչդեռ ժողովրդավարության ճանապարհը բռնած և այդ ուղղությամբ զարգացող պետությունների համար, ինչպես օրինակ՝ Հայաստանի Հանրապետության, ուսումնառության լայն դաշտ է բացվում ոչ միայն արևմտյան ժողովրդավարությունների փորձը յուրացնելու, այլև ոչ վաղ անցյալի սեփական պատմությունը վեր հանելու, դրան նոր հայացք հղելու, գործված սխալները թիրախավորելու ու դրանց շտկմանը լծվելու միջոցով:

Գիտական նորույթը: Ատենախոսությունն, ըստ էության, առաջին գիտական փորձն է՝ համակողմանիորեն ուսումնասիրելու 1991-2001 թթ. ՀՀ միջկուսակցական հարաբերությունների պատմությունը: Հայաստանի Երրորդ Հանրապետության առաջին տասնամյակի բազմակուսակցական համակարգի հաստատմամբ մեկնարկող կուսակցական նոր հարաբերությունները դիտարկվում են պատմականության

համատեքստում: Նախկինում կատարված հետազոտությունները շոշափել են հիմնահարցը սոսկ քաղաքագիտության և հասարակական-քաղաքական կյանքի պատմության տեսանկյուններից, մինչդեռ այժմ փորձ է արվում համակողմանիորեն ուսումնասիրել ՀՀ-ում բազմակուսակցական համակարգի ձևավորման, ինչպես նաև դրանից բխող միջկուսակցական հարաբերությունների պատմությունը: Ներկայացված են առանձնահատկությունները, որոնք բնորոշ էին ՀՀ-ում բազմակուսակցական համակարգի ձևավորմանը անկախության առաջին տասնամյակում: Մեկ աշխատանքի շրջանակներում ամփոփվում են ՀՀ կուսակցությունների գաղափարաբանական հիմնարար սկզբունքները՝ համեմատության անցկացման միջոցով ներկայացնելով նրանց աշխարհընկալումն ու առաջնահերթությունները: Համաչափորեն անդրադարձ է կատարվում նշյալ ժամանակաշրջանի բոլոր ակտիվ ու քաղաքական կշիռ ունեցող կուսակցությունների գործունեությանը՝ այն բխեցվելով նրանց տեսական դատողություններից: Անդրադարձ է կատարված ընտրական գործընթացներում կուսակցությունների ներգրավման ու իրադարձությունների զարգացման վրա դրանց ունեցած ազդեցության հիմնահարցերին: Հստակորեն սահմանված են իրողությունների պատճառներն ու հետևանքները: Համակողմանիորեն գնահատվել է ինչպես միջկուսակցական հարաբերությունների տասնամյա շրջափուլը, այնպես էլ հայանե հավանե արձանագրվել են դրա մատուցած արդյունքները: Աշխատանքում շրջանառության մեջ են դրվում նշյալ պատմափուլում միջկուսակցական հարաբերությունների հիմնահարցին առնչվող նոր արխիվային նյութեր, փաստաթղթեր, ուսումնասիրություններ: Այս տեսանկյունից նորություն է նաև հիմնահարցին վերաբերող արժեքավոր տեղեկությունների ամբարումը համացանցային կայքերից, տեսանյութերից, ժամանակի ակտիվ գործիչների հետ անցկացված հարցազրույցներից և այլն:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Աշխատության **նպատակը** 1991-2001 թթ. Հայաստանի Հանրապետության միջկուսակցական հարաբերությունների պատմության ներկայացումն է՝ վեր հանելով պատմական փաստերը, քննելով անկախության հաստատումից հետո կազմավորված կուսակցական հարաբերությունների պատմագիտական հղացքը, պատմական համատեքստայնացման (կոնտեքստուալիզացիայի) ենթարկելով ոչ վաղանցյալը:

Այստեղից էլ բխում են աշխատանքի հիմքում դրված հետևյալ **խնդիրները.**

- պարզաբանելով կուսակցությունների գաղափարաբանական սկզբունքներն ու հիմնադրույթները՝ երևան հանել հանրապետության կենսական հիմնահարցերի շուրջ միջկուսակցական բանավեճի էությունը;
- ներկայացնելով կուսակցությունների միջև գործնական հարաբերությունների սաղմնավորումը՝ բացահայտել միջկուսակցական հարաբերությունների ազդեցությունը անկախության հաստատման և ինքնիշխան պետության սահմանադրության ընդունման գործընթացների վրա;
- միջկուսակցական հարաբերությունները դիտելով գործնական հարթության վրա՝ պարզել դրանց պատմական զարգացման ընթացքն ու անկախության առաջին տասնամյակի ամփոփման արդյունքները:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Ատենախոսությունը կառուցված է պատմագիտության քանակական և որակական մեթոդների սինթեզման ճանապարհով: Փաստերի համադրման միջոցով հնարավորություն է ստեղծվել առավելապես տիպական ներկայացնել բազմակուսակցական համակարգի հաստատման և միջկուսակցական հարաբերությունների պատմության ընթացքը՝ ըստ թեմատիկ առանձնահատկությունների անհրաժեշտության պարագայում կիրառելով ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդների գործիքները: Այսպես, քանակական մեթոդի նշանակությունը հատկապես դրսևորվել է հայաստանյան տպագիր մամուլի հետ աշխատանքում: Ի հեճուկս սրան՝ կուսակցությունների քաղաքական մոտեցումների ու հիմնարար տեսակետի հստակեցման հարցում էլ հիմք է ընդունվել որակական մեթոդը՝ կենտրոնանալով առաջին հերթին կազմակերպությունների ներսում առավել մեծ դերակատարություն ունեցող գործիչների քաղաքական ընկալումների բացահայտման վրա: Համադրության մեթոդի միջոցով փորձ է արվել առավելագույնս ճշգրտել փաստերը՝ ոչ միակողմանիորեն դիտելով միջկուսակցական հարաբերությունների առանցքային դրվագները: Միջկուսակցական հարաբերությունների տեսական և գործնական (արդյունքային) հակադրությունների պայմանական բաժանման մեթոդի միջոցով է կազմված ատենախոսության առաջին գլուխը: Երկրորդ գլուխը կազմված է պատմական մեծ շղթայի առանձին իրադարձությունների մասնավոր քննության (case by case) մեթոդով, մինչդեռ երրորդը՝ որպես տեսությունից լիովին դեպի գործնականի անցման տրամաբանական հանգուցալուծման դրսևորում, շարադրված է ժամանակագրական հաջորդականության բաժանման մեթոդի միջոցով:

Քանակական մեթոդաբանության շրջանակներում է հարկավոր ընկալել նաև բազմաթիվ տեսագրությունների, արխիվային տեսանյութերի, հեռուստատեսային հաղորդումների ու ռեպորտաժների, վավերագրական ֆիլմերի և այլ աուդիո-վիդեո նյութերի կիրառումը: Օգտագործվել է նաև հարցազրույցների մեթոդը: Այս պատմափուլում ակտիվ գործունեություն ծավալած պետական-քաղաքական և կուսակցական գործիչների հետ հարցազրույցներ են անցկացվել՝ քննարկելով ինչպես ժամանակի հայտնի ու լայն շրջանակներին անհայտ իրադարձությունները, այնպես էլ գործիչների կոնկրետ քայլերն ու որոշումները, դրանց հիմնավորվածությունն ու իրավացիությունը:

Հետազոտության ժամանակագրական և տարածական շրջանակը: Թեպետ Հայաստանի Հանրապետությունում միջկուսակցական հարաբերությունների առաջին շրջափուլը իրավականորեն մեկնարկում է 1991 թ. «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»[1] ՀՀ օրենքի ընդունմամբ և ամփոփվում 2001 թ. ԱԺ-ում առաջին ընթերցում անցած ու 2002 թ. ընդունված «Կուսակցությունների մասին»[2] ՀՀ օրենքով, ուսումնասիրության մեկնակետը հանդիսանում է ԽՍՀՄ վերջին շրջափուլը, որն աչքի ընկավ միակուսակցական համակարգի ապամոնտաժմամբ, բազմակուսակցական համակարգի և միջկուսակցական հարաբերությունների փաստացի ձևավորմամբ: Մանրամասն անդրադարձ է կատարված ՀՀ անկախության առաջին տասնամյակում միջկուսակցական հարաբերությունների առանցքային դրվագներին՝ հատուկ ուշադրության ներքո պահելով 1991-1999 թթ. ընտրական գործընթացները:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկել և պաշտպանության է ներկայացրել ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը: Ատենախոսության հիմնական հարցադրումներն ու դրույթները իրենց արտացոլումն են ստացել հեղինակի հրատարակած յոթ հոդվածներում:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և ուսումնասիրվածության աստիճանը: Սույն աշխատանքի աղբյուրագիտական հիմքի առաջին սանդղակին պատշաճում են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) ֆոնդերի նյութերը: Աշխատանքի ստեղծման գործում հատկապես կարևորվել է ՀԱԱ-ում պահվող ՀՀ Գերագույն խորհրդի նախագահության ֆոնդը, որի ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում

[1] Տե՛ս ՀՀ օրենքը «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին», 26.02.1991, Ն-0266-Ի, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=78 (15.03.2018):

[2] Տե՛ս ՀՀ օրենքը «Կուսակցությունների մասին», 03.07.2002, ՀՕ, 410Ն, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1326&lang=arm (25.02.2018):

հսկայական տեղեկատվության վերհանման համար[3]: Նշանակալից է Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) ֆոնդը՝ անմիջական փաստական տվյալներ հաղորդելով ընտրական գործընթացների մասին[4]: Հիշարժան են նաև Հայաստանի կառավարության[5], ՀՀ արդարադատության նախարարության[6], Արցախյան շարժման փաստաթղթերի[7] ֆոնդերը, որոնց տեղեկությունները վերաբերում են ոչ միայն 1991-2001 թթ. պատմափուլին, այլև ավելի վաղ շրջանին՝ հնարավորություն տալով հասկանալ ուսումնասիրվող ժամանակաշրջանի ու իրադարձությունների ակունքներն ու նախադրյալները: Առանձնահատուկ կարևորություն ունեն ՀՀԾ[8], ՀԿԿ[9], ՀՀԿ[10], ՀԴԿ[11], ԱԻՄ[12] կուսակցությունների ֆոնդերը: Արխիվային փաստաթղթերի նշանակությունը սույն ատենախոսության հեղինակման գործում անհնար է գերագնահատել, քանզի դրանք աչքի են ընկնում իրենց կոնկրետությամբ, զերծ են պրստ-ֆակտում մեկնաբանություններից և ուսումնասիրողի առաջ դրսևորվում են ժամանակի դրոշմով՝ ազատված հետահայաց գնահատականների սուբյեկտիվայնությունից:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքի կարևորագույն շերտն է ներկայացնում նշյալ շրջանի թերթերի, օրաթերթերի ու ամսագրերի ամբողջությունը: Այս շարքում հիշատակելի են ինչպես հայկական («Հայաստանի Հանրապետություն», «Հայք», «Երկիր», «Առավոտ» և այլն), այնպես էլ արտասահմանյան պարբերականները («New York Times», «Cristian Science Monitor», «Общая Газета», «Аргументы и факты», «Известия» և այլն):

Ատենախոսությունը շարադրված է հայերեն և օտարալեզու տարաբնույթ սկզբնաղբյուրների ու

---

[3] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 207 (ՀՀ Գերագույն խորհրդի նախագահություն):

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1183 (Հայաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողով):

[5] Տե՛ս նույն տեղում, ֆ. 113 (ՀՀ կառավարություն):

[6] Տե՛ս նույն տեղում, ֆ. 121 (ՀՀ արդարադատության նախարարություն):

[7] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1159 (Արցախյան շարժման փաստաթղթերի ժողովածու):

[8] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1678 («Հայոց համազգային շարժում» կուսակցություն):

[9] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1 (Հայաստանի կոմունիստական կուսակցություն), ֆ. 1677 (ՀԿԿ փաստաթղթեր):

[10] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1688 (Հայաստանի հանրապետական կուսակցություն):

[11] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1537 (Հայաստանի դեմոկրատական կուսակցություն):

[12] Տե՛ս նույն տեղում, ֆ. 1679 («ԱԻՄ-Ք» կուսակցություն):

ուսումնասիրությունների հիմամբ: Բ. Արարքցյանի ու Ա. Սարգսյանի համատեղ ջանքերով ՀՀ անկախության 25-րդ հոբելյանի առթիվ լույս է ընծայվել փաստաթղթերի ժողովածու, որը բովանդակում է յուրօրինակ փաստաթղթեր, որոնց ընդունման ճանապարհով է ձևակերպվել ու կայացել ՀՀ անկախությունը[13]: Կուսակցությունների խորհրդարանական գործունեության մասին համապարփակ փաստական տեղեկատվությունը կուտակված է ՀՀ Գերագույն խորհրդի ու ՀՀ Ազգային ժողովի տեղեկագրերում: Ատենախոսության ստեղծման գործում էական նշանակություն է ունեցել «Հայաստանի Հանրապետության կուսակցություններ» տեղեկագիրը, որը ամբողջացրել է կուսակցությունների մասին չափազանց կարևոր տեղեկություններ[14]:

Հատկանշական են այս ժամանակաշրջանի գործիչների ելույթների ընտրանիները, ժողովածուները և այլն: Լ. Տեր-Պետրոսյանը հրատարակել է մի շարք աշխատություններ, որոնք ներառում են տարբեր տարիների նրա ելույթները, հոդվածները, մամուլի ասուլիսներն ու հարցազրույցները[15]: Դրանց շնորհիվ հնարավորություն է առաջանում անմիջականորեն ծանոթանալ նրա քաղաքական մտածողությանը, ՀՀԾ-ի քաղաքական առաջնահերթություններին ու իշխանության քաղաքականությանը: Վ. Մանուկյանը նույնպես տպագրել է իր ելույթների ու հարցազրույցների ժողովածուները, որոնք արժեքավոր են ինչպես ՀՀԾ-ի ձևավորման, այնպես էլ 1990-ական թթ. միջկուսակցական հարաբերությունների ուսումնասիրության տեսանկյունից[16]: 1990-ական թթ. հայաստանյան քաղաքական կյանքի առանցքային դրվագները բացահայտվում են Վ. Սիրադեղյանի ելույթների, հոդվածների ու հարցազրույցների ժողովածուում[17]: Հ. Գալստյանի ժողովածուները, գեղարվեստական պատումի տպավորությունը

---

[13] Տե՛ս Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակ: Փաստաթղթերի ժողովածու, կազմ. Արարքցյան Բ., Սարգսյան Ա., Ե., 2016:

[14] Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կուսակցություններ», Տեղեկագիր, Ե., Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ, 2007:

[15] Տե՛ս Տեր-Պետրոսյան Լ., Ընտրական ծրագիր, Ե., 1996: Նույնի՝ Պատերազմ, թե՞ խաղաղություն, Ե., 2001: Նույնի՝ Ապագան բախում է դուռը, Ե, 2002: Նույնի՝ Ընտրանի (Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ), Ե., 2006: Նույնի՝ Վերադարձ: Ելույթներ, հոդվածներ, մամլո ասուլիսներ, Ե., 2009: Նույնի՝ Հայ-թուրքական հարաբերություններ, Ե., 2009: Նույնի՝ Հայոց ցեղասպանությունը. հայացք պետականության դիտակետից, Ե., 2015:

[16] Տե՛ս Մանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում (Ելույթների և հոդվածների ժողովածու), Ե., 2002: Նույնի՝ Գնացքից թռչելու ժամանակն է: Հոդվածների հավաքածու, Ե., 2002:

[17] Տե՛ս Սիրադեղյան Վ., Երկիր: Ցպահանջ ... Ե., 2011:

թողնելով հանդերձ, հանդես են գալիս իբրև պատմական վավերագրեր և նրա գրավոր ամբողջական ժառանգություն[18]: Հայտնի քաղաքական գործիչների շարքում հիշատակելի են նաև Վ. Սարգսյանի, Ա. Մարգարյանի, Է. Եգորյանի, Վ. Խաչատրյանի ելույթների, հոդվածների ու հարցազրույցների ժողովածուները[19]:

ԱԻՄ-ի գաղափարաբանական հենքն ու քաղաքական գործունեության ակունքները, 1996 թ. նախագահական ընտրությունները, կուսակցական հարաբերությունները մեկնաբանված են Պ. Հայրիկյանի աշխատանքներում[20]: Հ. Բագրատյանի աշխատություններում անդրադարձ է կատարվում 1990-ական թթ. կուսակցական հարաբերություններին, դրանց գաղափարախոսություններին և այլն[21]: Ա. Բլեյանի կազմած գրքույկը ներառում է Համաժողովրդական շարժման գործիչների հոդվածները, որոնք բացահայտում են առանձին կուսակցությունների գաղափարական ուղղվածությունը[22]: Այս շրջափուլի միջկուսակցական հարաբերությունների պատմական վավերագիր է Հ. Մարուխյանի հեղինակած գրքույկը[23]:

Ս. Հարությունյանի հուշերը կարևոր են ԽՍՀՄ անկման շրջափուլի միջկուսակցական հարաբերությունների ընթացքը պարզելու համար[24]: Հիշարժան է Ռ. Ղազարյանի հուշերի գիրքը, որ պատկերացում է տալիս ԽՍՀՄ-ում տիրող իրավիճակի, Համաժողովրդական շարժման մեկնարկի ու ընթացքի մասին՝ առնչություն ունենալով սույն ատենախոսության շոշափած թեմային[25]: Հուշագրությունների թվում հարկ է հիշատակել

---

[18] Տե՛ս Գալստյան Հ., Չուղարկված նամակներ: Էսսեներ, հոդվածներ, կզմ. Մարության Հ., Ե., 2013: Նույնի՝ Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ..., կզմ. Հ. Մարության, Ե., 2002:

[19] Տե՛ս Սարգսյան Վ., Երկխոսություն: Ելույթների և հարցազրույցների ժողովածու, Ե., 2012: Մարգարյան Ա., Անկախությունն այլընտրանք չունի. ելույթներ և հարցազրույցներ, Ե., 2005: Եգորյան Է., Տեր կանգնենք մեր վաղվա օրվան, Ե., 2003: Խաչատրյան Վ., Անհատ, հասարակություն, իշխանություն. բարեփոխումների դժվարին ուղին, Ե., 2000:

[20] Տե՛ս Հայրիկյան Պ., Անկախության շրջանի երեք վավերագրեր (Փաստավավերագրություններ), Ե., 1997: Նույնի՝ Սեպտեմբեր, 1996 թվական, Ե., 1997:

[21] Տե՛ս Բագրատյան Հ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրանից դուրս գալու ելքերի մասին, Ե., 2000: Նույնի՝ Հայաստանը դարերի սահմանագծին, Ե., 2003:

[22] Տե՛ս Որն է մեր ճանապարհը: Հոդվածներ, կզմ. Բլեյան Ա., Ե., 1990:

[23] Տե՛ս Մարուխյան Հ., Մեր պատասխանը Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին, Ե., 1992:

[24] Տե՛ս Հարությունյան Ս., Անցյալի և ներկայի մասին, Ե., 2011:

[25] Տե՛ս Ղազարյան Ռ., Հաշվետու եմ, Ե., 2003:

նաև Վ. Օսկանյանի աշխատանքը[26], որը, ուղղակիորեն չառնչվելով ուսումնասիրության հիմնահարցին, որոշակի պատկերացումներ տալիս է ժամանակի քաղաքական կացության մասին: Ուշագրավ է Ռ. Դեմիրճյանի աշխատանքը, որ նվիրված է Կ. Դեմիրճյանի գործունեությանը[27]:

Սահմանադրության հիմնահարցը քննվում է մի շարք աշխատություններում, ինչպիսի օրինակ են հանդիսանում Գ. Հարությունյանի հետազոտությունները[28]: Սահմանադրական հիմնահարցերի պատմահամեմատական վերլուծության խնդիրը փորձում է լուծել Մ. Թելունցի աշխատանքը[29]: Վ. Նազարյանը քննում է սահմանադրության հիմնախնդիրը բազմաթիվ, այդ թվում՝ խորհրդարանական կառավարման համակարգի ներդրման տեսանկյունից[30]: Հ. Խաչատրյանը հեղինակել է ԱՄՆ սահմանադրության վերլուծությունը՝ նպատակ ունենալով փոխանցել այդ փորձը հայկական իրականությանը[31]: Նրա մեկ այլ աշխատության մեջ ներկայացված են 1995 թ. ընդունված Սահմանադրության նախապատմությունը, բովանդակությունն ու դրույթները[32]: Վ. Պողոսյանն ու Վ. Միրումյանը քննում են սահմանադրության ու պետական-ազգային գաղափարախոսության առնչակցության հարցերը[33]: ՀՀ Սահմանադրության դրույթներն ու հոդվածները հանրամատչելիորեն մեկնաբանված են Ա. Բաղդասարյանի կազմած մեկնաբանական աշխատանքում[34]: Սահմանադրության ու

---

[26] Տե՛ս Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով. Փոքր երկրի մեծ մարտահրավերները, նախարարի օրագրից, Ե., 2013:

[27] Տե՛ս Դեմիրճյան Ռ., Հիշատակ, Ե., 2012:

[28] Տե՛ս Հարությունյան Գ., Սահմանադրությունից՝ Սահմանադրականություն, Ե., 2004: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, խմբ. Հարությունյան Գ., Վաղարշյան Ա., Ե., 2010:

[29] Տե՛ս Թելունց Մ., Հայկական առաջին սահմանադրությունը. «Որոգայթ փառաց»-ը և ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը: ՀՀ սահմանադրության նոր նախագծեր, Ե., 2001:

[30] Տե՛ս Նազարյան Վ., Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, Ե., 1992:

[31] Տե՛ս Խաչատրյան Հ., Ամերիկայի Միացյալ Նահանգների Սահմանադրությունը (քաղաքական-իրավական վերլուծություն), Ե., 1991:

[32] Տե՛ս նույնի՝ Հայաստանի Հանրապետության առաջին սահմանադրությունը, Ե., 1997:

[33] Տե՛ս Պողոսյան Վ., Միրումյան Կ., Գաղափարախոսությունը և Սահմանադրությունը. նկատառումներ և խնդիրներ, Ե., 1999:

[34] Տե՛ս 117 հարց և պատասխան ՀՀ նոր Սահմանադրության մասին, ՀՀ իրավագետների և քաղաքագետների միություն, կազմ. Բաղդասարյան Ա., Ե., 1995:

դրա փոփոխություններին համատեղ հեղինակած գրքույկով անդրադառնում են Ա. Սահակյանն ու Ա. Սարգսյանը[35]:

Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմությանն է անդրադառնում Է. Մինասյանը՝ քննելով պետության հիմնադրությունից մինչ 2013 թ. ընկած ժամանակահատվածը: Աշխատությունն ընդգրկում է հանրապետության գրեթե բոլոր բնագավառների քննությունը՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլն[36]: Հայաստանի ներքին քաղաքական դրությունը անկախացման գործընթացում քննված է Ռ. Ազիզբեկյանի համառոտ ակնարկում[37]: Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքը տարբեր դիտանկյուններից վերլուծել է Ժ. Լիպարիտյանը իր մի շարք արժեքավոր աշխատություններում[38]: Տ. Թորոսյանի հետազոտությունը քննում է հետխորհրդային հասարակական կյանքի տրանսֆորմացիայի հարցերը՝ անդրադառնալով նաև կուսակցական դաշտի ձևավորման խնդրին[39]:

Հայաստանի կուսակցությունների մասին քաղաքագիտական բնույթի հետազոտություններ է կատարել Գ. Քեռյանը՝ վերլուծելով ՀՀՇ, ՀԿԿ, ԱԺՄ, ԱԻՄ կուսակցությունների ծրագրային դրույթներն ու կանոնադրությունները, իսկ մեկ այլ աշխատանքով անդրադառնում է մի շարք պետությունների կուսակցական համակարգերին[40]: ՀՀ կուսակցությունների գործունեությունը քննվում է նաև Հ. Աբրահամյանի ձեռնարկում, որտեղ լուսաբանված են քաղաքական կազմակերպությունների գործունեության ու ժողովրդավարության հիմնահարցերը[41]: Առանցքային է «Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական

---

[35] Տե՛ս Սահակյան Ա., Սարգսյան Ա., Սահմանադրական փոփոխություններ, Ե., 2003:

[36] Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Ե., 2013:

[37] Տե՛ս Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն: Համառոտ ակնարկ, ՀԳԱ. Պատմ. ին-տ., Ե., 1992:

[38] Տե՛ս Libaridian G., Armenia at the Crossroads: Democracy and Nationhood in the Post-Soviet Era: Essays, interviews, and speeches by the leaders of the national democratic movement in Armenia, Watertown, Massachusetts, 1991. Նույնի՝ Libaridian G., The Challenge of Statehood: Armenian Political Thinking since Independence, Watertown, Massachusetts, 1999. Նույնի՝ Modern Armenia: People, Nation, State, New Jersey, 2007.

[39] Տե՛ս Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Ե., 2006:

[40] Տե՛ս Քեռյան Գ., Հայաստանի Երրորդ Հանրապետության կուսակցական համակարգը և քաղաքական կուսակցությունները, Ե., 1996: Նույնի՝ Քաղաքական կուսակցություններ, Ե., 1996:

[41] Տե՛ս Աբրահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Ե., 2009:

կենտրոնի» մասնագետների հեղինակած աշխատանքը, որը վերլուծում է հասարակական-քաղաքական կյանքը, իշխանություն-ընդդիմություն դիմակայության ու միջկուսակցական հարաբերությունների լայն տեսադաշտը[42]: Հայաստանյան կուսակցությունների գաղափարաբանական առանձնահատկություններին է անդրադառնում Ա. Ենգոյանը[43]:

Ռ. Փանոսյանի, Ս. Մինասյանի, Ք. Բարսեղյանի, Ա. Իսկանդարյանի, Խ. Թոլոլյանի հոդվածները քննարկում են ոչ միայն հայաստանյան քաղաքական հիմնահարցերը, այլև կուսակցական կյանքի զարգացումները[44]: Վ. Դավթյանի ու Ա. Բաղդասարյանի աշխատանքները, Ա. Սարգսյանի հոդվածը ներկայացնում են ինչպես ՀՀ առաջին նախագահի գործունեությունը, այնպես էլ նրաղեկավարած իշխանության ու առաջնորդած կուսակցության քաղաքականությունը[45]:

Փաստահավաք լրագրող Թ. Հակոբյանը մի շարք աշխատանքներ է հեղինակել սույն ատենախոսության

---

[42] Տե՛ս Սարգսյան Մ., Սարոյան Ս., Ավթանդիլյան Ա., Վարդանյան Է. և ուրիշ., Սահմանադրական պետության կառուցման հիմնախնդիրը Հայաստանում: Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Ե., 2010:

[43] Տե՛ս Енгоян А., Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Е., 2011. Նույնի՝ Идеологические парадигмы переходного периода в Армении, «Вестник Ереванского Университета», 141.6, Е., 2013, с. 35-41.

[44] Տե՛ս Panossian R., Nationalism and Its (Dis)contents, After Independence, Post-Soviet Armenia, Ed.: Barrington L. W., The University of Michigan Press, 2006, pp. 225-247. Նույնի՝ Between Ambivalence and Intrusion; Politics and Identity in Armenia-Disapora Relations, Diaspora, Vol. 7, No. 2, 1998, pp. 149-196. Նույնի՝ The Past as Nation: Three Dimensions of Armenian Identity, Geopolitics, 2002, No 2, pp. 121-146. Минасян С., Внутриполитическое измерение внешней политики Армении, карабахский конфликт и армяно-турецкие отношения, Аналитическая записка № 209, ПОНАРС Евразия, Май 2012. Barseghyan K., Rethinking Nationhood: Post-Independence Discourse on National Identity in Armenia, Polish Sociological Review, No. 144, 2003, pp. 399-416. Նույնի՝ Changing Turkish Other in Post-Post Soviet Armenian Discourse on National Identity, Polish Sociological Review, No. 159, 2007, pp. 283-298. Искандарян А., Армения между автократией и полиархией, Proet Contra, Май-август2011. Tololyan Kh., Elites and Institutions in the Armenian Transnation. Diaspora: A Journal of Transnational Studies, Vol. 9, No. 1, 2000,pp. 104-134.

[45] Տե՛ս Դավթյան Վ., Առասպելի և իրականության սահմանագծին: Լևոն Տեր-Պետրոսյան. քաղաքացին և քաղաքագետը, Ե., 1996: Բաղդասարյան Ա., Լևոն Տեր-Պետրոսյան. դիմանկարի փորձ, Ե., 1996: Սարգսյան Ա., Լևոն Տեր-Պետրոսյան՝ Հիմնադիր-Նախագահ Հայաստանի Հանրապետության, Լ. Տեր-Պետրոսյան, Ընտրանի, Ե., 2006, էջ 665-709:

ընդգրկած պատմափուլի մասին[46]: Հայաստանյան ընթացած սոցիալ-քաղաքական գործընթացների վերլուծությանն է միտված Ս. Աստուրյանի հետազոտությունը[47]: Հայկական հարցի պատմության համառոտ ուրվագիծը ներկայացված է Լ. Խուրշուդյանի մենագրությունում, որի շրջանակներում հեղինակը քննադատաբար է արձագանքում նաև այդ հարցում իշխանության քաղաքականությանը[48]:

Հայաստանյան հիմնախնդիրների վերաբերյալ օտարալեզու (օրինակ՝ Փ. Ռուտլանդի[49]) հետազոտությունները նույնպես բավականին ուշագրավ են և հետազոտողին իրերի դրությանը մեկ այլ դիտանկյունից հետևելու հնարավորություն են ընձեռում: Թ. դը Վալի ուսումնասիրությունը, վերաբերելով հանդերձ Արցախյան հակամարտությանը, հետաքրքիր դրվագներով անդրադառնում է ներհայաստանյան քաղաքական իրողություններին[50]: Այս համատեքստում են դիտարկելի նաև Մ. Մուրադյանի ու Դ. Դրաքմընի, Ս. Քորնելի, Մ. Մանդելբաումի, Մ. Բրիլլ Օլքոթի, Գ. Աշերի հոդվածները[51]: Կ. Միգդալովիչի՝ ԱՄՆ Կոնգրեսի դատին հանձնած զեկույցներում նույնպես անդրադարձ է կատարվում հայաստանյան քաղաքական կյանքի նրբերանգներին[52]:

Աղբյուրագիտական հենքում հարկ է դիտարկել նաև ոչ-հայագիտական ուսումնասիրություններն ու հոդվածները, որոնք, անմիջականորեն չքննարկելով սույն ատենախոսության թեման, որոշակի առնչություններ ունեն դրա հետ՝ հանձինս պետականության հաստատման

---

[46] Տե՛ս Հակոբյան Թ., Կանաչ ու սև, Արցախյան օրագիր. ոչ պատերազմ, ոչ խաղաղություն, Երևան-Ստեփանակերտ, 2011: Նույնի՝ Հայերը և թուրքերը. պատերազմ, սառը պատերազմ, դիվանագիտություն, Ե., 2012:

[47] Տե՛ս Astourian S., From Ter-Petrossian to Kocharian: leadership change in Armenia, University of California, Berkeley, 2000-2001.

[48] Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Ե., 1995:

[49] Տե՛ս Rutland P., Democracy and Nationalism in Armenia, Europe-Asia Studies, Vol. 46, No. 5, 1994, pp. 839-861.

[50] Տե՛ս De Vaal T., Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War, New York and London, 2003.

[51] Տե՛ս Mooradian M., Druckman D., Hurting Stalemate or Mediation? The Conflict over Nagorno-Karabakh, 1990-95, Journal of Peace Research, Vol. 36, No. 6, Nov 1999, pp. 709-727.Cornell S., Turkey and The Conflict in Nagorno-Karabakh: A Delicate Balance, Middle Eastern Studies, Vol. 34, No. 1, Jan 1998, pp. 51-72. Mandelbaum M., Coup de Grace: The End of the Soviet Union, Fireign Affairs, Vol. 71, No. 1, America and the World, 1991-1992, pp. 164-183.Brill Olcott M., The Soviet (Dis)Union, Foreign Policy, No. 82, Spring 1991, pp. 118-136. Usher G., The Fate of Small Nations: The Karabakh Conflict Ten Years Later, Middle East Report, No. 213, Millenial Middle East: Changing Orders, Shifting Borders, Winter 1999, pp. 19-22.

[52] Տե՛ս Migdalovitz C., Armenia: Unexpected Change in Government, CRS Report in Congress, 5 May 1998, CRS-3.Նույնի՝ Armenia-Azerbaijan Conflict, Congressional Research Service Issue, Brief, 6 April 1994.

գործընթացների համաշխարհային փորձի, քաղաքական և պետական առաջնորդների միջև հարաբերությունների զարգացման օրինաչափությունների, սահմանադրականության գործընթացների զուգահեռման, կուսակցությունների գործունեության ընդհանուր նմանության և այլն: Այդ համատեքստում հիշատակելի են Ն. Բոբբիոյի աշխատությունը աջերի և ձախերի գաղափարաբանական տարբերությունների շուրջ[53], ՄըքԼիլլանի ուսումնասիրությունը գաղափարախոսության մասին[54], Ջ. Սարթորիի հետազոտությունը կուսակցությունների ու կուսակցական համակարգերի թեմայով[55], ԽՍՀՄ-ում ժողովրդավարացման գործընթացների շուրջ Ջ. Հոուքի ուսումնասիրությունը[56], կուսակցական հարաբերությունների մասին Մ. Դյուվերժեի, Ք. Լոուսոնի, Ի. Գլեբովայի, Վ. Սորգինի հետազոտությունները[57]: Կարևոր է նաև Իսրայելի կուսակցական համակարգի մասին Ա. Շերմանի հոդվածը, որը զուգահեռներ անցկացնելու պատեհ հնարավորություն է ստեղծում[58]:

Հիշարժան են նաև համացանցային կայքերն ու տեղեկատվական բազաները, որոնցից պակաս տեղեկություններ չէ, որ քաղվել են հետազոտության իրականացման համար: Այդ շարքում հատկապես նշելի են «Հայկական ուսումնասիրությունների ԱՆԻ հիմնադրամի», «Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի», ՀՀԾ, ՀՅԴ, ՀՀԿ կուսակցությունների պաշտոնական կայքերը: Ուշագրավ տեղեկատվական նյութ է կուտակված ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի, ԱԺՄ նախագահ Վ. Մանուկյանի, ԱԻՄ առաջնորդ Պ. Հայրիկյանի ոչ պաշտոնական ինտերնետային կայքերում: Ի դեպ, անառարկելի է նաև ՀՀ հեռուստաընկերությունների հաղորդումների ու ռեպորտաժների, համացանցում տեղադրված բազմաթիվ տեսագրությունների, փաստավավերագրական ֆիլմերի կարևորությունը ատենախոսության ստեղծման գործում:

Ապահովելու համար աշխատանքի բազմակողմանիությունն ու հավաստիությունը և

---

[53] Տե՛ս Bobbio N., Left and Right, the Significance of a Political Distinction, Chicago, 1996.

[54] Տե՛ս McLellan D., Ideology, Minnesota, 1986.

[55] Տե՛ս Sartori G., Parties and Party Systems: A Framework for Analysis, ECPR Press, 2005.

[56] Տե՛ս Hough J., Democratization and Revolution in USSR 1985-91, Brookings Institution Press, 1997.

[57] Տե՛ս Дюверже М., Политческие партии, М., 2000. Lawson K., Political Parties and Linkage, New Haven, CT, 1980. Глебова И., Партия власти, «Полис», Политические Исследование, Но. 2, 2004, с. 85-92. Соргин В., Политическая история США, М., 2001.

[58] Տե՛ս Sherman A., Israeli Socialism and Multy-Party System, The World Today, Vol. 17, No. 5, May 1961, pp. 271-226.

առավելագույնս ճիշտ ընկալելու համար ժամանակի քաղաքական հարաբերությունները՝ օգտագործվել է հարցազրույցների ձևաչափը: Սույն պատմափուլի հիմնահարցերի վերաբերյալ հեղինակի կողմից հարցազրույցներ են անցկացվել Հրանտ Բագրատյանի, Վազգեն Մանուկյանի, Աշոտ Մանուչարյանի, Պարույր Հայրիկյանի, Աղվան Վարդանյանի, Վիգեն Խաչատրյանի, Ալեքսան Հակոբյանի, Գառնիկ Իսագուլյանի, Ալբերտ Բաղդասարյանի, Աշոտ Սարգսյանի և Ազատ Արշակյանի հետ:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (առաջինը կազմված է երկու ենթագլուխներից, երկրորդը՝ չորս, երրորդը՝ հինգ), եզրակացությունից և օգտագործված սկզբնաղբյուրների ու գիտական գրականության ցանկից:

Ներածությունում ամփոփված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու խնդիրները: Սահմանված են հետազոտության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև հանգամանորեն ներկայացված է ուսումնասիրության մեթոդաբանությունը: Տրված է ուսումնասիրության աղբյուրագիտական հենքը, մասնավորապես՝ ատենախոսության թեմային վերաբերող օգտագործված աղբյուրների ու գրականության տեսությունը: Տարորոշված են նաև թեմայի ժամանակային-տարածական շրջանակները, մեկնաբանված է ատենախոսության կառուցվածքը:

Աշխատության առաջին գլուխը առանձնացնում է միջկուսակցական գաղափարաբանական բանավեճի էությունը՝ քննելով կազմակերպությունների հիմնադրույթային սկզբունքները: Այն բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցից առաջինը ներկայացնում է կուսակցությունների հիմնադրույթային սկզբունքներն ու գաղափարաբանությունը, իսկ երկրորդը՝ ազգային հիմնահարցերի շուրջ միջկուսակցական բանավեճը: Երկրորդ գլխում, կազմված չորս ենթագլուխներից, ժամանակագրական հաջորդականության պահպանման սկզբունքով վերցվում են նշյալ ժամանակափուլի երեք կարևորագույն իրադարձությունները (ՀՀ բազմակուսակցական համակարգի հաստատումը, ՀՀ անկախության հռչակումը, ՀՀ Սահմանադրության ընդունումը) և առանձին-առանձին քննարկվում միջկուսակցական հարաբերությունների արիզմայով: Առաջին ենթագլխում քննվում է միակուսակցական համակարգի վերացումն ու նոր՝ ժողովրդավարական կարգերի հաստատումը՝ հանձինս բազմակուսակցական համակարգի ձևավորման: Երկրորդ ենթագլխում քննարկվում է անկախության հիմնահարցը՝

միջկուսակցական հարաբերությունների օրակարգում: Երրորդ ենթագլխում քննվում է 1991-1994 թթ. միջկուսակցական հարաբերությունների շրջափուլը՝ որպես տեսական բնույթի հակադրության փոխակերպում գործնական քաղաքական պայքարի: Չորրորդ ենթագլուխն անդրադառնում է միջկուսակցական սուր բանավեճի ու պայքարի կենտրոնում գտնվող ինքնիշխան պետության Սահմանադրության հիմնահարցին: Ատենախոսության երրորդ գլուխը, որտեղ առանձնացվել են երկու պատմական շրջափուլեր՝ 1995-1998 և 1999-2001 թթ., բաժանված է հինգ ենթագլուխների: Այստեղ առաջինն անդրադառնում է կուսակցությունների բևեռացմանը 1995 թ. խորհրդարանական ընտրություններում, իսկ երկրորդը՝ 1996 թ. նախագահական ընտրություններում: Երրորդ ենթագլխում քննարկվում է իշխանության ճգնաժամում կուսակցությունների դերակատարության հարցը և հարդյունս՝ կուսակցությունների հարաբերակցության փոփոխությունը, իսկ չորրորդ ենթագլխում քննվում է միջկուսակցական հարաբերակցության փոփոխության հարցը: Հինգերորդ ենթագլուխն ամփոփում է միջկուսակցական հարաբերությունների տասնամյա շրջափուլը՝ արձանագրելով կուսակցությունների մասին օրենքի ընդունման և քաղաքական գործընթացներից կուսակցությունների լուսանցքայնացման փաստը:

1991-2001 թթ. միջկուսակցական հարաբերությունների զարգացման պատմական ընթացքի վերհանումից և ըստ այդմ՝ մասնավոր դեպքերի քննությունից հետո ընդհանուրը վերականգնելու հակադարձ մեթոդաբանության միջոցով կատարված են ատենախոսության եզրակացությունները.

- Հայաստանում միջկուսակցական հարաբերությունների իրավական ամրագրմանը նախորդել էր դրանց փաստացի ձևավորումը, և 1991 թ. «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը արդեն իսկ կայացած իրողության արձանագրումն էր: Ազդված համաշխարհային փորձից՝ հայաստանյան կուսակցություններն իրենց տեղը գրավեցին դասական քաղաքական ներկապնակում՝ միջկուսակցական բանավեճը ազգային հիմնահարցերի շուրջ փորձելով շաղախել աջերի ու ձախերի տիպարական պայքարի տարրերով:
- Տարբեր գաղափարաբանական հենք ունեցող կուսակցությունները, քննելով Թուրքիայի հետ անմիջական հարաբերությունների հարցը, ինքնըստինքյան ներքաշվում էին միմյանց հետ սուր բանավեճի մեջ: Այդ տարակարծությունները բացահայտում էին արտաքին քաղաքականության ընկալումը կուսակցությունների մոտ՝ հաղորդելով

համազգային նպատակների ու դրանց իրագործման հարցում պետության դերի մասին նրանց ըմբռնումը:

- Խիստ հատկանշական է, որ կուսակցությունները 1991 թ. օրենքի տեսանկյունից անկաշկանդ գործելու անանախադեպ հնարավորություն էին ստանում: Խորհրդային կարգերի տապալումից հետո նման վերափոխումը հարկ է դիտել պատմականության համատեքստում, քանի որ կուսակցությունների գործունեությունը համակարգող օրենքն իր բուն էությամբ ամբողջատիրության դեմ էր:
- ՀՀ անկախության ձեռք բերման գործընթացին մասնակցեցին Հայաստանի գրեթե բոլոր կուսակցությունները՝ ստանձնելով դրա պատասխանատվությունը: Արդ, 1991 թ. միջկուսակցական հարաբերակցության կերտած կոնսենսուսն անկախության հարցի առնչությամբ մի բացառիկ երևույթ էր:
- Սահմանադրության ընդունման գործընթացն ուղեկցվեց քաղաքական պայքարի բոլորատեսակ ելևէջներով, որտեղ թեև ընդդիմադիր կուսակցություններն անկարող եղան իրենց իշխանական մրցակիցներին պարտադրել սեփական նախընտրությունները, սակայն առողջ բանավեճի արդյունքում փոխզիջմամբ կազմվեցին Սահմանադրության բազմաթիվ հոդվածներ:
- 1991-1994 թթ. շրջափուլում փաստացի պատերազմական պայմաններում էր Հայաստանում շարունակվում միջկուսակցական պայքարը: Իրավիճակն ավելի էր կնճռոտվում Հայաստան-Արցախ տարբերակմամբ, երբ Հայաստանում իշխողությունը ՀՀՇ-ն էր, իսկ Արցախում՝ ՀՅԴ-ն: Այդպիսի պայմաններում Արցախը վերածվում էր միջկուսակցական հարաբերությունների պարզման մի նոր ասպարեզի:
- Հայաստանում միջկուսակցական հարաբերությունների զարգացումը 1991-1994 թթ. ընթանում էր գերազանցապես ՀՀՇ-ՀՅԴ առանցքի շուրջ: ՀՅԴ-ՀՀՇ հարաբերություններում տարակարծության առաջնային պատճառը ներհակ գաղափարներն էին և դրանցով սնուցված մտայնությունը, որը, դժբախտաբար, երբեմն-երբեմն վերածվում էր միջանձնային կոնֆլիկտների: Վերջինները դրսևորվում էին նշմարելի սենտիմենտալությամբ, ցուցադրականությամբ և ընդհուպ՝ ուժգնությամբ: Դրանով հանդերձ՝ կուսակցությունների միջև ձևավորված հարաբերությունների այդ որակը չի նսեմանում՝ մնալով որպես ՀՀ միջկուսակցական հարաբերությունների պատմության մի յուրօրինակ արար, որտեղ քաղաքական մրցակցությունն ու իշխանության համար պայքարը վերասերված կամ աղճատված չէր:

- Հայաստանյան մյուս քաղաքական կազմակերպությունները 1991-1994 թթ. հիմնականում ներդաշնակում էին ՀՀԾ-ՀՅԴ պայքարին՝ հարելով նրանցից որևէ մեկին: Ազդեցիկ կուսակցություններից հատկապես առանձնացնելի է ԱԺՄ-ն, որի կազմավորումը անձնական հակասությունների արդյունք էր: Մինչդեռ միջանձնային հակադրություններից հաջողությամբ խուսափելու փորձը թերևս պատկանում է ՀԿԿ-ին:
- ԽՍՀՄ փլուզման ու ժողովրդավարության «տենդի» պայմաններում Հայաստանում օրինաչափորեն աճում էր կուսակցությունների քանակը, որոնք, սակայն, կաղում էին ինչպես մարդկային, այնպես էլ նյութական ռեսուրսներից՝ հարկադրված լինելով հարել խոշոր կուսակցություններին և այդ եղանակով ճշգրտել իրենց տեղը քաղաքական քարտեզի վրա:
- 1995 թ. ՀՅԴ-ի գործունեության ստիպողական դադարեցումը անխուսափելիորեն բացասաբար պիտի ազդեր հանրապետության ժողովրդավարական բնույթի ձևավորման ու զարգացման վրա: Այդ քայլով ոչ միայն խաթարվեց 1991-1994 թթ. գաղափարաբանական մրցակցային հենքով միջկուսակցական հարաբերությունների ծավալումը, այլև ուղղակիորեն հարված հասցվեց նույն թվականի խորհրդարանական ընտրությունների լեգիտիմությանը:
- 1995 թ. ԱԺ ընտրություններով Հայաստանում դրվեց «աղմկալի» ընտրությունների պարտավելի արակտիկան: Այն ՀՀ գրեթե բոլոր ընտրությունների (առ 2018 թ.) ուղեկցողը դարձավ՝ անասելի բացասականությամբ օժտելով ընտրական գործընթացն ինքնին ու դրա ընկալումը, ինչպես նաև խեղաթյուրելով իշխանության ձևավորման գործընթացի էությունը:
- 1996 թ. ընտրությունը նոր պատուհաս դարձավ անփորձ կուսակցական-քաղաքական կյանքի համար: Ընտրության ելքի կաղացող օրինականությունը և ի հետևանս՝ ՀՀ ԱԺ շենքի գրավումը անշրջելիորեն վերանայեցին հայաստանյան կուսակցությունների դիրքերը՝ թուլացնելով թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր կազմակերպություններին:
- Այդու հանրապետության քաղաքական կյանքը մտավ չերևացող լարվածության մի նոր փուլի հորձանուտ: 1995-1996 թթ. ընտրական շրջափուլն առաջին ազդակները հաղորդեց կուսակցությունների դերակատարության նվազման տեսանկյունից: Իշխանության ձևավորման գործում, փաստացիորեն, 1995 թ. կուսակցություններին հավասար դերակատարություն ստացան անհատները՝

զգալիորեն խաթարելով 1991-1994 թթ. միջկուսակցական հարաբերությունների ժողովրդավարական զարգացումը:

- 1996 թ.ի վեր «անհատ-կուսակցություն» հակադրությունն անհամեմատ ցայտուն դարձավ: Հայսմ՝ երբ իշխանության բարձրագույն օղակներում անհաղթահարելի տարակարծություններ ծագեցին, դրանց հարթման գործում կուսակցությունների դերակատարությունն առ ոչինչ էր:
- 1998-1999 թթ. ընտրություններում, երբ քաղաքական դիսկուրս թելադրողի գործոնը կուսակցություններից փոխադրվեց անհատներին, դասական տիպի գաղափարական կուսակցությունները աստիճանաբար սկսեցին լուսանցքայնանալ: 1990-ական թթ. միաձույլ կուսակցությունները ենթարկվեցին բազմակի տրոհումների, որոնց արդյունքում շարունակաբար առաջանում էին նորանոր ինքնանպատակ կուսակցություններ՝ առանց քաղաքական վակուումը հագեցնելու ներուժի: Ընտրությունների միջոցով իշխանության փոփոխության անհնարինությունն, ի վերջո, հանգեց կուսակցական հարաբերություններում գաղափարաբանական հենքի նվազմանը՝ տուրք տալով իրավիճակային շահերի բավարարմանը:
- 1988-1990 թթ. Համաժողովրդական շարժման բովում գաղափարաբանական բանավեճի հենքով կերպավորված միջկուսակցական հարաբերությունները անկախության առաջին տասնամյակի ավարտին բռնեցին աստիճանական վատթարացման (դեգրադացման) ուղին՝ էականորեն իջեցնելով քաղաքական պայքարի նշանակությունը և իշխանության համար մղվող պայքարին հաղորդելով ինքնանպատակ ու իրավիճակային (կոնյունկտուրային) հատկություն:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտահայտված է հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպությունների գաղափարաբանական սկզբունքները, «Պատմություն և մշակույթ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., ԵՊՀ հրատարակչություն, 2017, էջ 250-260:
2. 1991 թ. ՀՀ նախագահական ընտրությունները՝ որպես բազմակուսակցական համակարգի առաջին քննություն, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու», (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), Ե., Լիմուշ հրատարակչություն, 2017, էջ 110-118:
3. Բազմակուսակցական համակարգի սկզբնավորումը Հայաստանում, «Լրաբեր» հասարակական գիտությունների,

թիվ 3 (651) սեպտեմբեր-դեկտեմբեր, Ե., ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատարակչություն, 2017, էջ 107-122:
4. Հայաստանի կուսակցությունների ձևավորումը անկախության վերականգնման գործընթացի համատեքստում, «Հայկական քաղաքագիտական հանդես», թիվ 1 (7), Ե., 2017, էջ 35-60:
5. Միջկուսակցական հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում 1995-2001 թթ. (համահեղինակ՝ Է. Մինասյան), «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (18), Ե., ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 20-28:
6. Հայաստանի Հանրապետության կուսակցությունների հարաբերությունները 1991-1994 թթ., «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (18), Ե., ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 66-76:
7. ՀՀ միջկուսակցական բանավեճը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման շուրջ անկախության առաջին տասնամյակում, «Հայագիտական հանդես», թիվ 1 (13), Ե., ԵՊՀ հրատարակչություն, 2018, էջ 71-79:

Овсепян Нждэ Арташесович

Межпартийные отношения в Республике Армения в 1991-2001 гг.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 ´´ История Армении''.

Зашита состоится 3-го июля 2018 г. в 14^{00}, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

Резюме

С распадом Советского Союза политическая система сразу перевернулась, открывая возможность для учреждения многопартийной системы. Закон 1991 года, определяющий деятельность общественно-политических организаций в Армении, имел огромную историческую значимость, поскольку ни одна из партий не получала дополнительных привилегий, и соответственно, принятый закон был направлен против тоталитарного режима. После того, как была провозглашена независимость, политический спектр наполнился новыми политическими партиями, которые вели существенную полемику на основе своих идеологий и политических принципов. Распад СССР и независимость

страны сформировали новую обстановку для политических дебатов на основе идеологических принципов. И этот факт положительно повлиял на соперничество политических партий в Армении. Диссертация изучает недавнюю историю Третей Республики Армении (1991-2001 гг.) пытаясь объяснить развитие межпартийных отношений систорического ракурса.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы. Во введении обоснована необходимость данного исследования, представлена его актуальность, новизна, цель и задачи, источниковедческая база и литература по вопросу.

Первая глава, которая называется “Идеологические принципы политических партий: межпартийные дебаты”и обсуждает идеологические основы армянских политических партий, разделена на две подглавы. Первая анализирует политические цели, принципы и задачи в отдельности для каждой из активных и крупных партий. Вторая подглава посвящена армянским национальным проблемам: армяно-турецким отношениям и социально-историческим понятиям партий по таким концепциям, как “государство”,“нация”, “национальная идеология” и “национальное единство”.

Вторая глава диссертации, называющаяся “Межпартийные отношения в 1991-1995 гг.” состоит из четырех подглав и является виртуальным мостом между первым и третьием главами, соединяя теоретические аспекты межпартийных отношений спрактическими аспектами. Теоретические разногласия между политическими партиями трансформировались в политическую практическую борьбу. В первой подглаве обсуждается формирование многопартийной системы. Вторая подглава представляет процесс независимости и определяет роль политических партий в нем с четким ударением на межпартийные дебаты. В третьей подглаве подробным образом представлены отношения между партиями во время Карабахской войны. Здесь видны первые признаки ухудшения роли политических партий на арене, так как политическая борьба опускалась до уровеня межличностных отношений, постепенно переводя межпартийные отношения во второстепенные. Четвертая подглава сконцентрирована на вопросе конституции суверенного и независимого государствас точки зрения межпартийных отношений.

В третьей главе диссертации, которая называется “Межпартийные отношения в 1995-2001 гг.”, представлено политическое соперничество партий в четырех выборах (2 президентские, 2 парламентские). Первая подглава посвящена парламентским выборам 1995 г., а вторая обсуждает президентские выборы 1996 г. как подходящий момент для новой борьбы между партиями. Третья подглава объясняет трансформация политического влияния с политических институциональных организаций к индивидуальным лидерам, аполитическим и военным деятелям во время смены власти в 1998 г. Четвертая подглава представляет новую реальность парламентских выборов 1999 г. и сформирование нового статус-кво между политическими партиями. Новые партии сформировались по логике ситуационных интересов, лишенный идеологических прочных

принципов. Последняя подглава завершает изучение межпартийных отношений в первом десятилетии независимости с принятием государственного закона о политических партиях.

Диссертация завершается заключением, в котором обобщены основные результаты исследования и оценены межпартийные отношения в первом десятилетии независимой Армении.

HOVSEPYAN NZHDEH ARTASHES

THE INTER-PARTY RELATIONS IN THE REPUBLIC OF ARMENIA IN 1991-2001

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on July 3, 2018, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA by the Institute of History of the National Academy Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Avenue 24/4).

SUMMARY

As the USSR collapsed, the political party system was the first to be reversed in 1991. Armenia juridically abolished the one-party system and adopted a multi-party one was truly a historical moment. It announced the establishment of a new democratic essence for the independent state. In the first decade of independence the fight for power between political parties was based on pure ideological and political principles. This fact positively distinguished competition of Armenian political parties.

The PhD thesis observes the inter-party relations in 1991-2001 in a context of contemporary history. The dissertation tries to embrace the recent history and interpret the relations between political parties from the tower of history. The recent political events are being contextualized, conceptualized and historicized with the framework of the PhD dissertation. Because political parties in developed democratic states have become institutionalized foundations nowadays, the importance of researching the Armenian experience cannot be underestimated. Thus, this study can be considered a lesson that determines when and what has gone wrong and why. This PhD dissertation aims to discuss the history of inter-party relations by revealing historical facts, presenting the historical essence of inter-party relations since independence and historically contextualizing the recent past.

The PhD dissertation consists of an Introduction, three chapters, a Conclusion and References. The introduction outlines the topicality, scientific

novelty, aims and objectives, the bases of sources for the research and the necessary bibliography related to the object of the thesis.

Chapter One, entitled “The Ideological Principles of Political Parties: Inter-Party Debate” elucidates the ideological and theoretical bases of political parties in Armenia. It consists of two subchapters. The first one analyzes goals and core principles of political organizations one by one. Here, comes the theoretical associations of Armenian political parties with classical political ideologies. The second subchapter is devoted to pure Armenian issues bycomprehensively presenting the debate about Armenian-Turkish normalization. The second subchapter focuses on the concepts of “state”, “nation”, “national ideology” and “national unity” in the socio-historical understanding of the parties.

Chapter Two is entitled “Inter-Party Relations in 1991-1995” which is a bridge connecting theoretical aspects of inter-party relations with practical ones. The theoretical debate between parties finds its presence in political instances. The first one opens the discussion of Soviet political reality and explains the transfer of power from Communists to APNM. It also discusses how the multi-party system was founded in Armenia. The second subchapter puts forward the issue of independence in the context of inter-party contest. The third subchapter is merely concentrated on the political strife between parties in the practical arena in the period of Nagorno-Karabakh war, while the last one underscores parties’ roles in the process of the adoption of the Basic Law of the country.

Chapter Three, entitled “Inter-Party Relations in 1995-2001”, merely draws the pattern of political practical competition during 4 elections (2 presidential, 2 parliamentary). The first subchapter depicts the parties’ engagement in 1995 parliamentary elections. The second one discusses 1996 presidential elections as a new opportunity for inter-party struggle. The third subchapter explains the transformation of political influence from institutional parties to individual leaders and apolitical, military figures during the events of change of power in 1998. The forth subchapter presents the new reality of the 1999 parliamentary elections and the formation of new status-quo between political parties which were formed solely based on political momentum lacking ideological firm principles and based on situational interests. The fifth subchapter summarizes the first decade of inter-party relations with the adoption of new state Law on Political Parties.

The Conclusion sums up the main findings of the PhD thesis with the careful assessment of inter-party relations in the first decade of independent Armenia.